

64—65. Հմմտ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքեր, Ա., 27): Այնպէս կը տեսնուի, որ Ստեփանոս այս տարւոյն քաշուած էր առաջնորդութենէն, աթոռը թողլով Ղուկասին:

Իր առաջնորդութեան տարիներուն Լիմի անապատը ծաղկած է մեծապէս: Արդէն 1628ին երբ առաջնորդութենէն առաւ, միաբանութեան անդամներու թիւը հասած էր 60ի («յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք ստացողի զրոյս Ստեփանոս վարդապետին, եւ... միաբանիցն որ կան այժմ. Կ. եղբայր միակեցական հաստատ կարգօք ի փառս Աստուծոյ» (Հոռմ, R. B. Casanatense 2053, fol. 406 v): Նոյնը կը կրկնէ Ստեփանոս 1629ին իր արձանագրութեան մէջ:

Որ սպասաւոր եմ յայս մենաստան, Լիմ կոչեցեալ անապատեան, Կ. անձինք ճգնողական, Փառարանողաց Աստուածութեան. Յետ Ներսէսի հօր սրբազան, Որ մեզ յանձնեաց զայս միաբան:

Իսկ Oxford ի թ. 96 հայերէն ձեռագիրը, որ հաւաքածոյ մըն է Դատաստանագրոց, անոնց թիւը 1638ին 70 կը ներկայացնէ (Conybeare, Catalogue, p. 218): 1636ին Աւետարան մը կը գրուի ի Լիմ (եւ մասամբ ի Վան), «ի խնդրոյ սրբաանունդ եւ մաքրամիտ, հեղահոգի, քաջ եւ արի Ստեփանոս վարդապետի եւ միաբանութեանս ամենայնի, որ են յանապատս Լիմ ԲԺ կարգաւորօք եւ Օ միակեցօք ի սէր Քրիստոսի եւ ի յապաշխարութիւն ճգնութեան աշխատեալք, անհանգիստ տքնութեամբ, մշտական առաքինութեամբ» (Լալայեանց, անդ, 889): Իսկ ինքը Ստեփանոս կ'աւելցնէ.

«Արդ անպիտանս եւ ապիկարս ի գործս կրօնաւորութեան, որ զանուն վարդապետի եւ զառաջնորդութեան առեալ՝ վասն հոգեւոր եղբարցս անապատիս եւ ի գործոց ճգնութեան եւ յառաքինութեան վերջացեալ եմ. որ զեղբարցս պէտս հոգոյ եւ մարմնոյ յանձն եմ առեալ եւ լիապէս չեմ կատարեալ, այլ պարտատէր եմ ինձ եւ սոցա: Բայց յոյս զՔրիստոս ունիմ, որ ի յեղբարց ազօրից մասն պարգեւէ մեզ. եւ որպէս աստ միաբան՝ յեկեղեցի եւ ի սեղան եւ յայլ ամենայն գործ. նոյնպէս եւ ի դատաստանին՝ ի միմեանց մի անջատեցէ. ամէն»: Միաբաններ-

րու թիւն է 1647ին «Մ. աւելի եւ ոչ-պակաս» (անդ, էջ 64—65):

Առաքել Դաւրիթեցի կը գրէ «աճեցին միաբանք Լիմայ անապատիս, վասն որոյ երեալ ի Լիմայ՝ զնացին ի տեղին, որ անուանի Կտուց... եւ անդ եւս շինեցին անապատ եւ եղբայրանոց» (էջ 254):

Ստեփանոսի օրով կար ի Լիմ փութաջան գրիչ մը Աւետիս, որուն համար կը գրէր Ստեփանոս վարդապետ, թէ «Ձայս սուրբ Աւետարանս յստոյզ յօրինակէ ետու գրել վասն անապատիս հաստատութեան ի Սըսայ յօրինակէն, զոր ընտրեաց սէր Աւետիս ծերն եւ զրեաց Ա իւրն, որ տարան ի Թացու. եւ Ա Նորշինոյ՝ Յոհանէսին¹. եւ մինս այս, ի տկարութեան ժամանակին, որ մինչ ի մեռանելոյ յօրն կու գրէր. զոր Տէր Աստուած ողորմեսցի իւրն ամէն» (Լալայեանց, անդ, 889):

Ստեփանոս Շատախեցի իբրեւ գրական աշխատանք ունի միակ գրութիւն մը, 350 տունէ, ի ննջումն Աստուածածնի, զոր կցած է իր ուսուցչին՝ Ներսէս Մոկացոյ «Աստուած եւ սէր ամենայնի» տաղին, իբրեւ ի լրումն, վասն զի Մոկացին թերակատար թողուցած էր այդ տաղը. տես այս մասին Մոկացոյ նոյն տաղին առթիւ գրածներս: Quadro այս յաւելուածը «անմասն» կը դտնէ այն ոճին, զոր ծաղկեցուցած էր Ներսէս իր տաղին մէջ:

Նորայր Բիւզանդացի իր անտիպ մէկ գրուածքին մէջ կը գրէ թէ Ստեփանոսի այս յաւելուածական մասը ինչ ինչ ձեռագիրներու մէջ վերնագիր կը կրէ «Ստեփանոսի Շատախեցոյ»: Ես չեմ հանդիպած այդպիսի ձեռագրի:

Ի կատարածին կը գետեղեմ արձանագրութիւն մը, զոր Ստեփանոս վարդապետ փորագրել տուած է Խաչքարի մը վրայ ի Լիմ: Արտագրութիւնը կատարած է Ե. Լալայեանց, Ազգագրական Հանդէս, ԻԲ (1912), էջ 92—93:

Առաջին երեսին վրայ:

ԿԱՆԳՆԵՅԻ ԶԵԱՉՍ ԲԱՐԵՆԱՒՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ. ԵՍ ՄԵՂԱԻՈՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԲԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐ. Ի ԼԻՄԱՅ ԱՆԱՊԱՏՍ ԸՆԴ ԷՈՎԱՆԵԱԻ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳԱՅ ԶԱԻՐԱՎԱՐԻՆ Ի ԹՎ. ՌԷԸ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ ԶԻՍ ԵՒ ԶՄԻԱԲԱՆ(Ս) ԱՆԱՊԱՏԻՍ Ի ՔՐԻՍՏՈՍ:

¹ Այս Աւետարանն է թ. 380 ձեռագիրը, 1635ին (Լալայեանց, անդ 885—887):

Երկրորդ երեսի վրայ:

ՈՎ ԲԱՌԱՆԵՇ ԶԵՆ ՅԱՎՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԵԱԼ ԱՐԵԱՄԲ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՅՈՐՈՒՄ ՀԱՆԳՉԻ Ի ՔԵՁ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ ԵՂԵՐ ՄԵՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ Ի ՅԱՆԻՇԻՅՆ ՀԻՆՆ ԱԳԱՄԵԱՆ ՅՈՐԺԱՄ ԾԱԳԻՍ ՓԱՅԼԱՆՄԱՆ ԼՆՈՒՍ ԼՈՒՍՈՎ ԶԵՐԿԻՐ ԼԸՄԱՆ ՓԱՌՕՔ ԿԱՆԳՆԵՍ Ի ԳՈՂԳՈՒՅՆ ԵՐԿՐՊԱԳԻՍ ՅԱԶԳԷ ՄԱՐԳԱՆ ՊԱՅՄԱՌ ԾԱԳԻՍ ԼՈՅՍ ԳՈ ՓԱՅԼՄԱՆ ՅՈԳԻՍ ՄԵՂՕՔ ՄԵՌԵԱԼ ԲՆԱԿԱՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԹՇՈՒԱՌԱԿԱՆ ՀՈԳՈՎ ԹԱԽԾԵԱԼ ԵՒ ԱՆՊԵՏԱՆ ՈՐ ՍՊԱՍԱՒՈՐ ԵՄ ՅԱՅՍ ՄԵՆԱՍԱՆ ԼԻՄ ԿՈՉԵՑԵԱԼ ԱՆԱՊԱՏԵԱՆ, Կ. ԱՆՁԻՆՔ ԾԳՆՈՂԱԿԱՆ, ՓԱՌԱԲԱՆՈՂԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ. ՅԵՏ ՆԵՐՍԷՍԻ ՀՕՐ ՍՐԲԱԶԱՆ ՈՐ ՄԵՁ ՅԱՆՁՆԵԱՅ ԶԱՅՍ ՄԻԱԲԱՆ, ԻՆՔՆ ՀԱՆԳԵԱԻ Ի ԳԵՐԵԶՄԱՆ ՄԵՁ ՍՈՒԳ ԵԹՈՂ ԱՆԱՆՅԱԿԱՆ Ի ԹՎԻՆ ՌԷ = ԽԱՊԱՐ ԽՕՐԱՄԱՆԱՄ, Գ ԸՆԿ ՆՄԻՆ ԵՂԵՒ ՎԱԽՃԱՆ ԵՒ ՄԵՔ ՄՆԱՅԱՔ Ի ՏԱՏԱՆՄԱՆ Ի ՆԵՐՀԱԿԱՅՆ ԲՆԱԿԱՆ ԶՈՐ ԵՒ ՀԱՅՑԵՄՔ ԵՐԿՐՊԱԳՈՒՅՔ ԽԱՉԻՍ ՏԵՄԱՆ ԻԻՐ ՅԱՆԳԻՄԱՆ ՍԻՐՈՎ ԽԵՒԻՐԵԼ ՄԵՁ ԹՈՂՈՒԹԵԱՆ² ՔՐԻՍՏՈՍԷ ՄԻՇՏ ՅԱԻԻՏԵԱՆ. ԹՎԻՆ ՌԷԸ ԳՐԵՑԱԻ:

Ստեփանոս կանգնած է մահարձան մ'ալ 1647ին, ուր արձանագրած է 1621—1647 տարիներուն, այսինքն Ներսէս Մոկացոյ եւ իր առաջնորդութեան տարիներուն ի Լիմ իր առաջնորդութեան տարիներուն ի վախճանած կրօնաւորներու անունները: Ասոնցմէ առաջին ութը քահանայական դասէ են, իսկ երեսունը եղբայրներ: Յառաջ կը բերեմ առաջին ութի անուններն միայն եւ անուանացանկիս կցուած վերջարանականը:

- ԹՎ. ՌԷ. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍՍՅԷՔ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ.³ ՏԵՐ ԱԻՆՏԻՍԻՆ⁴. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԻՆ⁴. ՏԵՐ ՍԱՐԳԻՍ⁵. ՏԵՐ ՅՈՎԱՆԷՍ. ՏԵՐ ՄԵԼԻՔԻՍԵՐ.

² Տպ. Թոգոթիւն: ³ Ծերունի գրիչ. † 1635. Հմմտ. վերը: ⁴ Կը յիշուի 1635ին Աւետիս երէցի կողմէ «առաջնորդի սուրբ ուխտի» (Լիմայ) Ստեփանոս վարդապետի, վերակացութեան (տպ. վերակացութեամբ) հաւրերարցս եւ Պետրոս արհիպիսկոպոսին». Լալայեանց, Յուլիան, էջ 886: ⁵ Հմմտ. անդ, էջ 888:

ՏԵՐ ԳԱԻԹ.
ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԿԱՆՑ.
.....
.....

ԱՅՍ ԵՆ ԱՌԱՋՆՈՐԳՐՆ ԹԻՇԵՅԷՔ ԱՆԱՊԱՏԻՍ ԱՄԵՆԱՅՆ. ՌԷ ԹՎԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՂԵ ԹՎԻՆ. Գ ԱՍ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳԱՊԵՏՆ ԿԵՑԱԻ, ՎԱԽՃԱՆԵՑԱԻ. ԵՒ ԱՆՏԻ ՄԻՆՉԵՒ ՅԱՅՄՄ՝ ԵՍ ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՍՊԱՍԱՒՈՐԵՄ ԱՆԱՊԱՏԻՍ. ԵՒ Թ. ԱԹՈՒԼ (՞) ՎԵՍՊԱՍԱՒՈՐԵՄ ԱՆԱՊԱՏԻՍ. ԵՒ ԱՅՅՐ ԿԱՄՔ Հ. ԵՂԲԱՅՐ ՀԱՍՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ. ԵՒ ԱՅՅՐ ԿԱՄՔ Հ. ԵՂԲԱՅՐ ՀԱՍՐԱՏԱՏ. ՈՎ ՈՐ ՎԱԽՃԱՆԻ ԳԱՅՑԷՔ ՈՂՈՐՄԻ ՏԱՅՑԷՔ:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԸՉԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ

(ԿԵՆՍՍԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳՇԵՐ)

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Աշխատարեց՝ ՅՈՎԱՆՓ ԹԱԳԷՈՍԵԱՆ

ԳՂՈՒՆ Ե.

(Շարունակութիւն):

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ (1791—1813)

Յարութիւն Լազարեանը աղայ Յովակիմի երրորդ որդին էր. ծնուել է 1791 թ. փետրուար 15ին:

Մ. Ստեփանը այսպէս է բնութագրում. «Մնա՛ զարգացաւ եւ հրահանգեցաւ ընդ ձեռամբ բարեկիրթ դաստիարակաց:

Առողջ էր նա անձամբն, հասակագեղ, զուարթ, հեղ բարիւք, եւ դիմօք պայծառ»: Պատանեկական հասակում Յարութիւնը մտնում է գինուորական ծառայութեան մէջ, ուր նա ցուցադրում է արտակարգ ուղիղ կան ընդունակութիւններ: Այնուհետեւ մասնակցել է 42 կռիւների, մեծ քաջազործութիւններ արել եւ իր գինուորական մեծ տաղանդը ի յայտ բերել: Անշուշտ, նա կ'ունենար շատ փայլուն ապագայ, կը հասնէր մեծամեծ աստիճանների ու փառքի, եթէ անողոր ճակատագիրը այնքա՛ն վաղ չկտրէր նրա երիտասարդական ծաղիկ կեանքի թելը՝ 22 տարեկան հասակում...:

⁶ Տպ. առջինը: ⁷ Տպ. ցայտն:

Իր այդ մատաղ հասակում արդէն ունեցել է թիկնապահ զնդի շխարհ-բխտիտի աստիճան, ստացել է Ս. Աննայի Բ. աստիճանի եւ Ս. Վլադիմիրի չորրորդ աստիճանի շքանշաններ «հանդերձ փնջով», իսկ Կուլմայի պատերազմում Նապոլէոն Ա.ի դէմ ցոյց



Յարութիւն Յ. Լազարեանց

տուած արտակարգ քաջագործութիւնների համար՝ Սուր եւ Սաչ, «այլ եւ Շքադրամ արծաթի, եւ Բրուսաց անուանեալ Շքանշան. ի վարձ արժանաւորագոյն վաստակոց»:

Ծառայել է կայսերական թիկնապահ զնդի մէջ, իսկ 1805 թ. օգոստոս 29ին կայսերական հրովարտակով նշանակուել է թարգման Արտաքին գործոց կայսերական Ատեանում:

Հաւատարիմ իր տոհմային աւանդներին Յարութիւնն էլ, որպէս նախանձախնդիր հայ ժողովրդի կրթական գործի յառաջդիմութեան, եւ բացի այդ, որովհետեւ նաեւ «ի մատաղ տիրոց սիրող էր նա իմաստից, եւ Հայրենակցացն լուսաւորութեան առաւել յոյժ փափագող», ուստի եւ նուիրում է Լազարեան ձեւարանին 50.000 ուրլի թղթադրամ¹:

Յարութիւն Լազարեանը վախճանուել է 1813 թ. հոկտեմբեր 4ին Լայպցիկի հռչակաւոր արիւնահեղ ճակատամարտում Նապոլէոն Բոնապարտի դէմ, ստանալով մահացու հարուած թնդանօթային ոււմբից:

¹ Պրոֆ. Չինովեի ասելով, այդ գումարը նուիրել են ծնողները ի յիշատակ իրենց վաղամեծի սիրեցեալ գաւախի: Տե՛ս էջ 22:

1815 թ. կայսեր հրամանով Յարութիւնի մարմինը փոխադրուած են Լայպցիկից Պետերբուրգ եւ ամփոփուած Հայոց Հանգստարանի Ս. Յարութիւն եկեղեցում:

Վշտահար ծնողները բազում նուիրատուութիւններ են անում նրա յիշատակին եւ ի միջի այլոց նաեւ Ն. Չուրայի Ամենափրկչեան վանքին, որպէս զի ամէն տարի հոգեհանգիստ կատարեն նրա յիշատակին:

Հանդուցեալի շիրինն ունի հետեւեալ տապանագիրը.

«Աստանօր ամփոփեալ կոյ մարմին թիկնապահ Գուսարեան Գնդի Շխարթոթմիսթրի եւ զանազան նշանաց կրող Ասպետի՝ Յարութիւն Յովակիմեան Լազարեանց, ծնելոյ յամի 1791, եւ անկելոյ յարիւնահեղ պատերազմին որ առ Լէյպցիկաւ ի 4 հոկտեմբերի 1813 ամի, ի 22ամաց հասակի»:

Ուշագրաւ է Մոսկուայի մի ուսու լրագրի (որի անունը Մ. Մսերեանցը չի յիշատակուած) հետեւեալ գրութիւնը, նուիրուած Յարութիւն Լազարեանի յիշատակին:

Այդ գրութիւնը, որ հրատարակուած է 1817 թ. փետրուար 28ին, պարունակում է իր մէջ նաեւ մի քանի կենսագրական թանկագին տեղեկութիւններ:

«Վաշտապետ եւ Ասպետ կայսերական Անձնապահ Գնդի՝ Յարութիւն Յովակիմեան Լազարեանց, քաջասիրտ այս պատանի եմուտ ի ծառայութիւն ի սկզբան անդ հռչակաւոր պատերազմին Ռուսաց, որ եղեւ յամի 1812, կցորդելով յինքեան ընդ ողեկան կատարելութեանց զարտաքինն զեղեցկութիւն զիմաց, եւ ընդ զինուորական հրահանգաց՝ զհմտութիւնն բազում արուեստից եւ լեզուաց, ի ժամանակի ահաւոր ճակատամարտին որ առ Լէյպցիկաւ՝ զմահաբերն ընկալաւ հարուած, որով զրկեցաւ յարեւէ ծաղկափթիթ կենացն ի քսաներկուամեայ հասակի: Էր նա զարդարեալ բազում նշանօք՝ զորս ստացեալն էր ի վարձ գովանի ծառայութեանցն եւ սյրական քաջութեանցն ի մարտս. էր եւս սիրելի յաչս իւրոց մեծաւորաց եւ ընկերաց: Զգալով լիապէս զմեծութիւն կորստեանս՝ որով իւրից կարեմք պատուել զյիշատակ քաջի զօրականիս, եթէ ոչ զայս արձակելով առ նա բարբառ ի սրտէ

«խաղաղութիւն քոյոցդ ոսկերաց, օրհնեալ ընծունդ հօր բարեպաշտի»²:

ԳԼՈՒԽ Զ.

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ (1786—1858)

I.

Յովհաննէս Լազարեանը՝ աղա Յովակիմի աւագ որդին էր. ծնուել է 1786 թ. փետրուար մէկին:

Կենսագրական տեղեկութիւնները Լազարեանները երկու կենսագիրներ ժամ էլ չափազանց պակասաւոր են եւ վերաբերում են զլիսաւորապէս նրա ստացած շքանշաններին ու պետական պաշտօնների յիշատակութեան...

Բարձրագոյն հրովարտակներ թարգմանութիւններն են, որոնցից կարելի է անել մի շարք թանկագին տեղեկութիւններ: Այսպէս, այդ հրովարտակներից իմանում ենք, որ Յովհաննէսը իր սկզբնական կրթութիւնը ստացել է Պետերբուրգի զերմանական մի զպրոցում եւ ապա անցել Մոսկուայի համալսարանը, որն աւարտել է 1821 թուին¹: Իր զինուորական ծառայութիւնը կատարել է կայսերական թիկնապահ զօրագունդի մէջ (Գվարդիա): 1801 թ. յուլիս 3ին նա մտել է պետական ծառայութեան մէջ Մոսկուայի «Արտաքին գործոց կայսերական Ատեանի Դիւանում»:

1801 թ. հոկտեմբեր 9ին նշանակուել է թարգման Ալէքսանդր Ա. կայսեր թագաւորութեան հանդէսի ժամանակ:

1815 թ. մայիս 3ին ստանձնել է Լազարեան ձեւարանի հոգաբարձուի պաշտօնը²:

1831 թ. Մոսկուայում եւ շրջակայքում տարածուել է խօլերայի համաճարակը: Յովհաննէս Լազարեանը հրաւիրուած է խօլերայի

² Տե՛ս Մ. Մսերեանցի «Յիշատակարան», մաս Գ., էջ 93:
¹ Պրոֆ. Չինովեի ասելով, Յովհաննէսը իր սկզբնական կրթութիւնը ստացել է իր ծնողների ընտանիքում, այնուհետեւ քննութիւն տալով, մտել Մոսկ. Համալսարանը (էջ 19): Մենք հետեւել ենք Մ. Մսերեանցին:
² Պրոֆ. Էնթադրել, որ Մ. Մսերեանցի այս հարցադրութեան մէջ (էջ 27) ստորագրել է ապագրական սխալ, քանզի ըստ Պրոֆ. Չինովեի Յովհաննէսը նաեւ անկուել է ձեւարանի հոգաբարձու հօր կողմից, որն եղել է ձեւարանի առաջին հոգաբարձու 1815 թ. սկսած, 1818 թուին յուլիս 15ին, իսկ եղբայրը՝ Պատուարդ, նրա օգնականն այն 1818 թուին: Տե՛ս Չինովե, էջ 93:

տարածման դէմ պայքարի գործին բերել իր մասնակցութիւնը: Եւ Յովհաննէս Լազարեանը ցուցադրում է այնպիսի եռանդուն ու խելացի գործունէութիւն, որ վարձատրուած է մայիս 22ին Ս. Աննայի երկրորդ աստիճանի շքանշանով, զարդարուած կայսերական թագով:

1834 թ. հոկտեմբեր 22ին ստանում է Ս. Վլադիմիրի Յրդ աստիճանի շքանշան «ի տրիտուր գովանի եւ Չերմեոսանդն ծառայութեան եւ սեպհական աշխատութեանց», որ ցոյց էր տուել Մոսկուայի Յաղթական կամարի կառուցման գործում:

Աւելացնենք մեր կողմից, որ այս կամարը իր գեղեցկութեամբ ու հնութեամբ կազմում է Մոսկուայի պատմական շէնքերից մէկը:

1835ին Մոսկուայում տեղի է ունենում Ռուսական ձեռագործների եւ արուեստների ցուցահանդէս: Յովհաննէս Լազարեանը բե-



Յովհաննէս Լազարեանց

րում է իր եռանդուն եւ օգտաշատ մասնակցութիւնը, նախ ցուցահանդէսի շէնքի կառուցման եւ ապա կազմակերպութեան գործում: Այդ առթիւ նա ստանում է կայսրից ազգամանդեայ մատանի, վրան գրուած կայսեր անունը, եւ ապա «նորին կայսերական Մեծութեան Դրան Սենեկապետի» (Կամեր-հեր) կոչումը:

Այնուհետեւ գալիս են մի շարք բարձրագոյն հրովարտակներ ու հրամանագրեր,

որոնցով գնահատուած են նրա բազմազան այլ ծառայութիւնները, մատուցած պետութեան եւ մասնաւորապէս Լազարեան ձեռնարանին՝ «ի տրիտուր յարատեւ ջերմեռանդութեան յօգուտ Լազարեան ձեռնարանի» եւ «յազգաց մեծամեծ նուիրանացն» յօգուտ նոյն ձեռնարանի: Ի միջի այլոց այդ առթիւ ստացել է «ոսկեայ ազամանդայեա տուփ պնչադեղոյ հանդերձ քանդակաւ փակագրի անուան Ն. Կ. Մեծութեան»:

41 հրովարտակներէն ու հրամանագրերէն, որոնցով գնահատուած են Յովհաննէս Լազարեանի բազմազան մարդերու ցոյց տուած ծառայութիւններն ու կատարած աշխատանքները, մենք առաջ բերինք միմիայն մի քանիսը, կարեւորագոյնները, մի գաղափար տալու համար Յովհաննէս Լազարեանի կեանքի ու գործունէութեան մասին, ինչպէս եւ այն մեծ դերքի մասին, որ նա նուաճել էր ուսուց կառավարական բարձր շրջաններում, եւ այն էլ մեծ մասամբ Նիկողայոս Ա. կայսեր բռնապետական իշխանութեան մոռյլ օրերին...

Յիշատակենք նաեւ, որ 1854 թ. սեպտեմբեր 10ին ստացել է Պարսից Շահից «Առելի եւ Արեգակի» առաջին աստիճանի շքանշանը: Այս առթիւ Մոսկուայի Պարսից Գեասկանի Յովհաննէս Լազարեանին ուղղած նամակի մէջ հետեւեալ ուշադրաւ պատճառաբանութիւնն է բերուած.

«... Ըստ հաստատուն համաձայնութեան եւ սերտ յարակցութեան՝ զոր ունին ի միջի իրենաց երկուքին հօրազոյն Պետութիւնք՝ Պարսից եւ Ռուսաց, կառավարութիւնն Պարսից պարտ վարկանի յայտնել զիր երախտագիտութիւն իբրաքանչիւր հպատակի Ռուսաց՝ որ օգտակար ինչ վաստակս ցուցանէ վասն Պարսկաստանի:

«Չերդ Գերագանցութիւն, որպէս հոգարարձու Լազարեան ձեռնարանի եղելոյ ի Մոսկուա, յարաջան հոգողութեամբ հանապաղ փոյթ եւ ինամ կալաք զաստիարակելոցն ի նմա՝ հպատակաց նորին Մեծութեան Շահի» եւ այլն:

Այս նամակից երեւում է, որ Լազարեան ձեռնարանը եղել է նաեւ պարսկահայութեան համար մի լուսատու կանթեղ, որի ճառագայթները թափանցել են նաեւ Պարսկաստանի հայ ժողովրդի ամենախուլ անկիրնները, լուսւորել այն ու սուել շօշափելի ար-

դիւնքներ: Ձեռնարանի բուն պատմութեան մէջ մենք կը տեսնենք, որ արդարեւ մի շարք պարսկահայ մանուկներ են սովորել ձեռնարանում, ապա աւարտելով այն, վերադարձել են Պարսկաստան, մտել պետական ծառայութեան մէջ, ամենայն հաւատարմութեամբ ծառայել, հասել մեծ պաշտօնների ու մեծապէս օգտուել եղել թէ Պարսից կառավարութեան ու ժողովրդին եւ թէ իրենց ազգին:

Յովհաննէս Լազարեանը զանազան ժամանակներում եւ տարբեր հանդամանքներում վարել է նաեւ թարգմանի պաշտօն պետական հիմնարկներում. ի միջի այլոց նաեւ Ալեքսանդր Ա. կայսեր թագադրութեան ժամանակ: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ նա տիրապետել է մի շարք եւրոպական եւ արեւելեան լեզուների: Եւ արդարեւ, 1821 թ. ապրիլ 4ին նա ստացել է Մոսկուայի համալսարանի աւարտման վկայական, որից երեւում է, որ նա ստացել է լաւ կրթութիւն եւ բացի այդ Ռուսերէն, Գերմաներէն ու Ֆրանսերէն լեզուների մէջ ցոյց է տուել մեծ յառաջադիմութիւն եւ հմտութիւն:

Յովհաննէս Լազարեանը եղել է Պետերբուրգի Բանտերի Խնամատար Կոմիտէի անդամ:

1847 թ. ընտրուել է անդամ Գրականութեան եւ հնութիւնների Փարիզի Ասիական ընկերութեան:

Վերջապէս, եղել է պատուոյ անդամ Պետերբուրգի Բնագնաց Ընկերութեան եւ Պետերբուրգի ու Մոսկուայի Տնտեսական Ազատ Ընկերութեան, որը, ի շնորհիւ այնքան մեծ հոշակ ստացաւ 19րդ դարի վերջերքին, մանաւանդ Ալեքսանդր Ա. կայսեր յետադէմ օրերին իր ազատախոհ գործունէութեամբ:

Մենք կարեւոր չհամարեցինք մի առ մի թուելու այն բարձր պաշտօններն ու ստացած աստիճաններն ու շքանշանները: Իր երկարատեւ պետական ու կրթական գործունէութեան ընթացքին, արձանագրենք միայն, որ նա հասել է ներգործական պետական խորհրդականի աստիճանին եւ ստացել շքանշաններից մեծագոյնները՝ Ս. Յովհաննու Երուսաղէմացոյ եւ Ս. Նախակոչ Առաքելոյն Անդրէի:

Յովհաննէս Լազարեանը ունեցել է կալուածներ՝ Պերմ Նահանգում 19.222 շունչ ճորտ գիւղացիներով. Սոլիկամսկում՝ ազա-

հանքեր, երկաթի եւ թուջի (չուգուն) գործարաններ: Մոսկուայում մի փայտաշէն եւ Նիժնի Նովգորոդում՝ մի փայտաշէն եւ մի քարաշէն տուն, իսկ Եարոսլաւսկի նահանգի Դանիլեւսկի գաւառում մի փոքրիկ հողամաս 27 շունչ ճորտ գիւղացիներով:

Յովհաննէսն եւ իր եղբայր Խաչատուրը 1853 թ. նուիրել են ձեռնարանին իրենց սեփական տունը Մոսկուայում «հանդերձ ամենայն շինուածովքն՝ որ առ նմին եւ գետնով՝ որոյ տարածութիւնն է 2983½ քառ. սաժէն»:

Բացի այդ՝ երկու եղբայրները զանազան ժամանակներում եւ զանազան առիթներով մինչեւ 1864 թ. արել են զբամական նուիրատուութիւններ ձեռնարանին, որոնք կազմում են մի պատկանելի գումար՝ 502.437 ռուբլի արծաթ կամ թղթադրամով աւելի քան մէկուկէս միլիոն:

Յովհաննէս Լազարեանը վախճանուել է կաթուածից, անգուակ, 1858 թ. փետրուար 6ին, 72 տարեկան հասակում եւ թաղուել է Պետերբուրգի Հայոց Գերեզմանատան Ս. Յարութիւն եկեղեցում: Յուղարկաւորութիւնը կատարուել է մեծ շուքով: Ի միջի այլոց, ներկայ են եղել ձեռնարանի սաներից 20 հոգի, իրենց Դաստիարակ-վերակացուների հետ, որոնք յատկապէս այդ նպատակով բերուել են Մոսկուայից եղբոր՝ Խաչատուր Յովակիմեան Լազարեանից հաշուով եւ 5 օր հիւրընկալուել նրա տանը:

Մահից առաջ կտակով նա թողել էր ձեռնարանին 50.000 ռուբլի արծաթ. եղբայրը՝ Խաչատուրը իր կողմից աւելացնում է ի յարգանս եղբոր յիշատակի 10.000 ռուբլի արծաթ, որպիսի գումարը թղթադրամով կազմում է շուրջ 200.000 ռուբլի:

*

Լազարեաններին նուիրուած են բազում ներբողներ թէ ձեռնարանի աշակերտների եւ ուսուցիչների եւ թէ ուրիշ ազգայինների կողմից: Մի մասը բերուած է Մ. Մսերեանի «Յիշատակարան»-ում: Այդ ներբողները՝ արձակ թէ չափածոյ, գրուած են գրարար եւ ճոռոմ ոճով, թէեւ ներշնչուած ջերմ զգացումներով:

Ի միջի այլոց, Լէօն իր «Ստեփան Նազարեանցի կենսագրութիւն» աշխատանքի մէջ հրատարակել է երկու բանաստեղծութիւններ, որոնց հեղինակը ինքը մեր մեծ հրա-

պարակախօսն է. մէկը գրուած է 1841 թ. մարտ 30ին եւ ապրիլ 19ին: Առաջինը նուիրուած է ընդհանրապէս Լազարեան տոհմին, միւսը՝ յատկապէս Յովհաննէս Լազարեանցին: Առաջ ենք բերում այդ նշխարները:

Թէ սմն ի Հայս արժանաւոր անմահութեան Ստոյգ արդեամբք, ընտիր գոհիւք ի շահ ազգի Այդ վեհ մատոյց քաջ վայել է ո՞ր այլ անուան,
Թէ ոչ Ձերում, Տեարք Լազարեան, չքեղ տոհմի:

Ուրախ լերուք, ուրախ լերուք, գՁեղ Աստուած
Կոչեաց լինել փառք եւ պարծանք Հայաստանի.
Այն Մոսկովեան Աթէնք Հայոց որո՞յ ստեղծուած,
Այո՛, մտաց, սրտի ձերոյ ազգասիրի:

Լէօն հետեւեալ բացատրութիւնն է տալիս այդ ոտանաւորի գրութեան շարժառիթի մասին:

«... Երեւում է, ասում է նա, — որ Նազարեանցը գնացել էր շնորհաւորելու Լազարեանների Չասիկը եւ, ինչպէս սովորութիւն էր, մատուցեց նրանց այդ ոտանաւոր ուղերձը»:

Երկրորդ բանաստեղծութիւնը, որ նուիրուած է յատկապէս Յովհաննէս Լազարեանին, ըստ երեւոյթին, թելագրուած է երախտագիտական զգացմունքից, այն բարիքների համար, որ «վայելել է նա Լազարեան Ընտանիքից», — ասում է Լէօն:

Մի՛ տարադէպ թուեսցին Քեզ ազգի պաշտպան
Շնորհաճանաչ սրտի գեղմունք, նուազ արգար.

Քանի՛ արդէն առատ բարիք աղբրացան
Յիս բաղաւորս Քո յնտանեաց գերամեծար:

Ձքեղ այսօր գովեմ երգեմ,
Իմ Յովհաննէս աստեղագարդ,
Կեցցե՛ս Դու լոյս Հայոց մաղթեմ
Կեցցես անչէ՛ջ, վայել՛լ զուարթ՝:

*

3 Տե՛ս Լէօ, «Ստ. Նազ. Կենս.», էջ 112—113:

